ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«08» 02 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 07

Ձեռնարկողը՝ ***<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ***
ՀՀ Կոտայքի մարզ, Ողոջյան ավան

Գործունեությունը՝ ***Կարենիս համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
ՀՀ Կոտայքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 07

« 08 » 02 2018թ.

ՀՀ Կոտայքի մարզի Կարենիս համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ <<Մեծ Մասրենի>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Հիմնադրութային փաստաթուղթ

ՀՀ Կոտայքի մարզի Կարենիս համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը՝ համատեղված համայնքի կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման նախագծի հետ, մշակվել է «Մեծ Մասրենի» ՍՊԸ-ում, ՀՀ Կոտայքի մարզի Կարենիս համայնքի պատվերով (Պայմանագիր N ՀՀ ԿՄԿՀ – ՊԸԱՇՁԲ-01/0 1):

ՀՀ Կոտայքի մարզի Կարենիս համայնքը գտնվում է Հրազդան գետի ձախ ափին՝ մարզկենտրոնից 25կմ, Երևանից 30կմ հեռավորության վրա: Բնակավայրը գտնվում է ծովի մակարդակից 1350-1400մ. բարձր նիշի վրա:

Կարենիս համայնքում ներկայումս բնակվում է 858 մարդ, հեռանկարում՝ 923 մարդ:

Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +34°C, իսկ ձմռանը -25.2°C): Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 516մմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 45սմ:

Բնակավայրի տարածքի կառուցապատումը ներկայացված է բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների կենտրոնացած տեղակայմամբ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 882.0հա: Համայնքի հողերից 593.74հա ներկայումս ունի գյուղատնտեսական նշանակություն, հեռանկարում կլինի 570.21հա: Բնակավայրերի հողերը կազմում են 104.09հա, հեռանկարում՝ 117.78հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը՝ 95.09հա, հեռանկարում՝ 100.72հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 60.36հա, հեռանկարում՝ 62.67հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 1.13հա, հեռանկարում՝ 3.34հա, ջրային հողեր՝ 10.72 հեռանկարում 10.45, անտառային հողեր՝ 16.87հա, հեռանկարում՝ 16.87հա:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և ձկնաբուծությամբ:

Կարենիս համայնքի բնակելի տարածքները նախատեսված են հիմնականում բնակելի կառուցապատման, դրանց ենթակառուցվածքների, հասարակական նշանակության օբյեկտների առաջնային տեղակայման համար:

Համայնքի հեռանկարային զարգացման ենթակա տարածքը գտնվում է համայնքի հյուսիս-արևելյան հատվածում, որը կից է Չարենցավան քաղաքին, ինչը և իր հերթին մեծ առավելություն է ինժեներական ենթակառուցվածքների և առկա ճանապարհների

հարմարավետության առումով: Հաշվի առնելով առկա հողային ֆոնդը նոր հատվածներում հողամասերի մակերեսները տատանվում են 800-1500ք.մ տնամերձ հողամասերով: Կարենիս գյուղը հիմնականում կառուցապատված է 1-2 հարկանի քարե պատերով, ավանդական շարվածքով, ուղիղ շարվածքի տուֆ քարերով, թիթեղյա կամ ասբոշիֆերի ծածկ ունեցող տներով: Կառուցապատման գիծը, հիմնականում պահպանված է և սահմանված փողոցների կարմիր գծից մոտ 3մ հեռավորությամբ:

Գյուղի կենտրոնում է գտնվում գյուղապետարանը, դպրոցը և համայնքի հասարակական կենտրոնը:

Բուժ ամբուլատորիան, մշակույթի տունը, գրադարանը, գտնվում են համայնքապետարանի շենքում: Համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որը խթան է առաջացնում տուրիզմի զարգացմանը:

Կարենիս համայնքի ջրամատակարարումն իրականացվում է բնակավայրի տարածքով անցնող Մաքրավանի Պ/Կ Աբովյան ջրատարից: Ջրամատակարարման բաշխիչ ցանցը սպասարկում է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ կողմից: Բաշխիչ ցանցի ջրագծերը սնվում են գործող ջրատարից, բնակավայրում բացակայում են ՕԿՋ-ները: Ջրի ախտահանումը իրականացվում է ջրատարի գլխամասում գործող քլորակայանների միջոցով:

Ջրամատակարարման համակարգի տեխնիկապես վատ վիճակը, ջրատար խողովակների մաշվածությունը և քայքայվածությունը, այս ամենը բերում է մեծ հոսակորուստների:

Նախատեսվում է հեռանկարում՝ նոր ՕԿՋ-ների կառուցում, ինչպես նաև ջրագծերի վերակառուցում պոլիէթիլենե խողովակներով; Ջրամատկարարման համակարգի կենտրոնացումը մեկ ջրատարով՝ կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջների իրականացման համար:

Ջրապահանջը հաշվարկելիս, որպես հիմք ընդունվել է գործող ՇՆևԿ 2.04.02-84*-ը: Բնակչության մեկ մարդու օրական ջրապահանջը հաշվարկային տարում ընդունվում է 200լ/օր:

Կարենիս համայնքը չունի կոյուղու համակարգ և յուրաքանչյուրը անհատապես ինքն է լուծում իր խնդիրները: Կոյուղացումն իրականացվում է բակային ներծծման հորերով: Կոյուղացման նման եղանակ լուրջ վտանգ է պարունակում շրջապատի սանիտարական վիճակի համար: Միայն Չարենցավան – Երևան կենցաղային կոյուղու կոլեկտորին հարակից որոշ տների կոյուղագծերը միացված են կոլեկտորից:Հեռանկարում նախատեսվում է կենցաղային կոյուղու նոր ցանցերի կառուցում, որտեղ կոյուղաջրերը նախատեսվում է հեռացնել, Չարենցավան – Երևան կենցաղային կոյուղու կոլեկտորին:

Ներկայումս Կարենիս համայնքը հեղեղատար կոյուղի չունի: Անձրևաջրերը անկանոն ձևով առանց մաքրման հեռացվում են դեպի Հրազդան գետ:

Համայնքի ռելեֆը հնարավորություն է տալիս հեղեղատար ջրերի ամբողջ ելքը հավաքել և մաքրելուց հետո հեռացնել դեպի Հրազդան գետ:

Հեղեղատար կոյուղին պետք է ընդգրկի գյուղական համայնքի ամբողջ տարածքը և համայնքը շրջապատող ամբողջ ջրահավաք ավազանը: Կոյուղու ընդհանուր երկարությունը կկազմի 12.3կմ: Հեղեղատար ցանցերը կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով:

Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե թուջե Փ200-500 խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Կարենիս գյուղի տնամերձ հողամասերի ոռոգումը իրականացվում է Հրազդան գետից : Ոռոգումը իրականացվում է ինչպես հողային հունով, այնպես էլ կիսաքանդ բետոնե խողովակներով : Հեռանկարում նախատեսվում է ոռոգման ցանցի վերանորոգում :

Ոռոգման համակարգում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

1) Ոռոգման համակարգերի պահպանում, շահագործում և գույքագրում :

2) Ջրօգտագործողների համակարգի վերջնական ձևավորում, ինքնահոս ջրամատակարարման ընդլայնում, էներգետիկ ծախսերի կրճատում, ջուր մատակարարող և օգտագործող փոխհարաբերությունների բարելավում :

3) Ջրամբարների կառուցում, համայնքում ոռոգման ջրերի վերաբերյալ առկա խնդիրների վերանայում և լուծման ժամանակացույցի կազմում :

Կարենիս համայնքի էներգամատակարարումը իրականացնում է <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ <<Գեղամա>> մասնաճյուղը : Համայնքում գործում են 3 էլ. Ենթակայաններ, որոնցից 2-ը ծառայում են Կարենիս համայնքի կարիքների համար, իսկ մեկը սպասարկում է Չարենցավան համայնքին : Համայնքի էլեկտրամատակարարման սխեման կազմում է 610հազ.կվտ/ժամ/տարի տրանսֆորմատորային հզորություն (N1-400կվտ, N2-400 կվտ) : Համաձայն մեթոդակարգի, էլեկտրամագնիսական ճառագայթման վեր նշված աղբյուրները համարվում են սակավազոր և չեն դիտարկվում որպես մթնոլորտի աղտոտման աղբյուրներ : Հեռանկարում նախատեսվում է էլեկտրամատակարարման ցանցի 60%-ի չափով մասնակի վերանորոգում , հին փայտյա հենասյուների փոխարինումը նորերով, 10 և 0.4կվ լարման ցանցի նախատեսում, այլընտրանքային էներգետիկայի կայացում և զարգացում :

Կարենիս համայնքը ներկայումս գազաֆիկացված է: Համայնքը միջին ճնշման գազ ստանում է Արզնի համայնքից եկող Փ100մ/ճ գազատարից : Համայնքի գազամատակարարման համակարգը երկաստիճան է : Միջին ճնշման գազատարից գազը մտնում է գազաբաշխիչ կայան, որտեղ ստացվող ցածր ճնշման գազը խողովակներով մատակարարվում է բնակչությանը կենցաղային և ջեռուցման կարիքների բավարարման համար : Բնակչության աճին զուգընթաց կկառուցվեն նոր թաղամասեր և նոր գազամատակարարման ցանց :

Անհատական բնակելի տների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական բնակարանային կաթսաներով կամ գազի վառարաններով, իսկ տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման կարիքներն ապահովելու համար բնակարաններում տեղադրվում են գազասալիկներ և գազի ջրատաքացուցիչներ:

Կուլտուր-կենցաղային, հասարակական շենքերի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կարող է իրականացվել կենտրոնացված եղանակով կցակառույց, ինչպես նաև գոյություն ունեցող կաթսայատներից:

Համայնքի հեռանկարային զարգացման համար նախատեսված տները կունենան տեղական ջեռուցում և տաք ջրամատակարարում:

Չնայած Կարենիս համայնքի գոյություն ունեցող կանաչապատվածության ընդհանուր բարձր աստիճանի, /տնամերձ բերքատու այգիներ/, համայնքի տարածքում նախատեսված է իրականացնել 8հա անտառապատման աշխատանքներ, որից արդեն 3հա սահմաններում կատարվել են ծառատնկման աշխատանքներ՝ մոտ 4000 ծառ:

Կարենիս համայնքը ունի երկու գերեզմանատուն, որից մեկը 0.95հա մակերեսով գտնվում է բնակավայրի հյուսիսային-արևելյան հատվածում: Ներկայումս գերեզմանոցը ունի մասնակի փակ կարգավիճակ: Երկրորդ գերեզմանոցի համար հատկացվել է 1.0 մակերեսով հողատարածք, որը գտնվում է բնակավայրից հարավ- արևելք: Գերեզմանատան սանիտարապաշտպանիչ գոտին պաշտպանված է:

Կարենիս համայնքում աղբահանությունն իրականացվում է շաբաթական 3 անգամ, աղբը տեղափոխվում է Չարենցավան քաղաքի աղբավայր:

Ներկա իրավիճակում Կարենիս համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ չեն գործում, այդ իսկ պատճառով արդյունաբերական թափոնները բացակայում են:

Ներկայումս իրականացման փուլում է Կոտայքի մարզի աղբահանության կառավարման ծրագիրը, որի շրջանակներում Հրազդանում կկառուցվի նոր ժամանակակից աղբավայր:

COMMISSION OF EXPERTS

Ծրագիրը նախատեսում է բնակավայրերում կազմակերպել փոքր տարողությամբ աղբահավաք վայրեր, որտեղից պարբերաբար աղբը կտեղափոխվի Հրազդան քաղաքի աղբավայր:

Կարենիս համայնքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը, ջեռուցման ժամանակահատվածում օգտագործվող վառարանները, արդյունաբերական ձեռնարկությունները, սակայն դրանց արտանետումների աղտոտվածության մակարդակները չեն գերազանցում սահմանված նորմերը:

Կարենիս համայնքապետարանում տեղի են ունեցել <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված հանրային քննարկումները, որոնց ընթացքում հնչած առաջարկությունները հաշվի են առնվել նախագծի լրամշակումների ընթացքում և հանրության կողմից հավանություն է արժանացել: Հատակագծում լուծված են կեղտաջրերի մաքրման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի նվազեցման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Ընդհանուր առմամբ հեռանկարային զարգացման ընթացքում գլխավոր հատակագծում նախատեսված միջոցառումների արդյունքում Կարենիս համայնքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Կարենիս համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Մեսրոպյան